ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի հոկտեմբերի26-ին: Մասնակցողների թիվը՝ 9:
Մասնակցողների անուն, ազգանուն՝

1. Անգին Սահակյան
2. Ալինա Թորոյան
3. Անահիտ Անդրեասյան
4. Կարեն Գիժլարյան
5. Ամալյա Խուբլարյան
6. Սուսան Գորգինյան
7. Մարինե Պողոսյան
8. Անուշ Խաչատրյան
9. Տատյանա Սարգսյան

Օրակարգում՝

1. Մեթոդական միավորման նիստի օրակարգի ներկայացում և հաստատում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
2. Նախորդ մեթոդական միավորման նիստի որոշումների կատարման ընթացքի քննարկում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
3. «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրության շրջանակում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփում և քննարկում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
4. Նոյեմբեր ամսվա ընթացքում «Մաթեմատիկա» առարկայից իրականացվելիք դասալսումների կազմակերպում և ժամանակացույցի քննարկում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
5. «Որոշի խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատի դրանք» վերջնարդյունքի գնահատման գործընթացի կազմակերպում և արդյունքների վերլուծություն (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):
6. Նոյեմբեր ամսվա համար նախատեսված միջոցառումների նախապատրաստական աշխատանքների կազմակերպում և պատասխանատուների սահմանում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյան):

ԼՍԵՑԻՆ 1

Մեթոդական միավորման ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց 2026 թվականի հոկտեմբերի 26-ին նախատեսված մեթոդական միավորման նիստի օրակարգի նախագիծը՝ ներառված 6 հարցերով, զեկուցողներով և քննարկման հիմնական ուղղություններով:

Նշվեց, որ օրակարգը մշակվել է՝ հիմք ընդունելով մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը, ուսումնական գործընթացի կազմակերպման առաջնահերթությունները և ընթացիկ աշխատանքային խնդիրները: Ընդգծվեց, որ օրակարգում ընդգրկված հարցերն ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, մեթոդական աշխատանքների համակարգմանը և առաջադրված խնդիրների համատեղ քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ 2

ՄՄ ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքը՝ ամփոփելով իրականացված և ընթացքի մեջ գտնվող աշխատանքները:

ՄՄ քարտուղար Ա. Խուբլարյանը տեղեկացրեց, որ նախորդ նիստի արձանագրությունը կազմվել և էլեկտրոնային եղանակով ներկայացվել է սահմանված՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Անդրադառնալով ուսումնական գործընթացի կազմակերպմանն առնչվող աշխատանքներին՝ ՄՄ ղեկավարը նշեց, որ ԴԿՏՀ համակարգում թեմատիկ պլանների մուտքագրման աշխատանքներն ավարտվել են, իսկ հաստատված պլաններով նախատեսված նախագծային աշխատանքներն իրականացվում են սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Ներկայացվեց նաև սովորողների ԱՈՒՊ-ների իրականացման ընթացքը: Նշվեց, որ անհրաժեշտության դեպքում պլաններում կատարվել են համապատասխան լրացումներ և փոփոխություններ, իսկ ուսուցիչները հետևողականորեն իրականացնում են նախատեսված աշխատանքները և արձանագրում սովորողների առաջընթացը: Էլեկտրոնային մատյանների վարման վերաբերյալ նշվեց, որ դրանց լրացման նկատմամբ իրականացվում է պարբերական մշտադիտարկում, իսկ արձանագրված թերություններն ու բացթողումները շտկվում են ընթացիկ աշխատանքների շրջանակում:

ՄՄ ղեկավարը տեղեկացրեց նաև, որ «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության շրջանակում դասալսումներ են իրականացվել Անուշ Խաչատրյանի մոտ՝ 6-րդ Բ դասարանում, և Անահիտ Անդրեասյանի մոտ՝ 6-րդ Գ դասարանում: Դասալսումների արդյունքների մանրամասն վերլուծությունը նախատեսվել է ներկայացնել օրակարգի համապատասխան հարցի շրջանակում:

Նախորդ նիստում ընդունված որոշման համաձայն՝ ՄՄ ղեկավար Ա. Սահակյանն այս նիստի ընթացքում հանդես եկավ «Ուսումնական առարկաների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարելավում» թեմայով զեկուցմամբ: Ներկայացվեցին ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, դասավանդման ժամանակակից և տարբերակված մեթոդների կիրառման, սովորողների անհատական առանձնահատկությունների հաշվառման և ուսումնառության արդյունքների բարելավման հիմնական մոտեցումները: Կարևորվեց նաև մեթոդական միավորման դերը՝ ուսուցիչների մասնագիտական համագործակցության, արդյունավետ փորձի փոխանակման և դասավանդման որակի շարունակական բարելավման գործում:

ՄՄ ղեկավարը տեղեկացրեց, որ տնօրինության կողմից նախատեսվում է գնահատել մեթոդական միավորումների ղեկավարների անցկացրած դասընթացների արդյունավետությունը: Այդ նպատակով մշակվել է էլեկտրոնային հարցաշար, որը կտրամադրվի ՄՄ անդամներին՝ լրացման համար: Ստացված արդյունքները կօգտագործվեն դասընթացի արդյունավետության գնահատման և հետագա մեթոդական աշխատանքների ուղղությունների հստակեցման համար:

ԼՍԵՑԻՆ 3

ՄՄ ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց 6-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրության արդյունքները: Ներկայացման ընթացքում անդրադարձ կատարվեց դասերի պլանավորմանն ու կազմակերպմանը, կիրառված ուսուցման մեթոդներին, սահմանված նպատակների իրագործմանը և սովորողների մասնակցության ապահովմանը: Նշվեց, որ իրականացված դասալսումները հնարավորություն են տվել առանձնացնել ինչպես արդյունավետ կիրառվող մոտեցումներ, այնպես էլ հետագա ուշադրություն պահանջող ուղղություններ:

Դրական դիտարկումներից նշվեցին դասերի նպատակների հիմնականում հստակ սահմանումը, ուսումնական նյութի համապատասխանեցումը սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններին, ինչպես նաև տեսողական, գործնական ու խաղային մեթոդների կիրառումը: Արդյունավետ է գնահատվել զննական նյութերի և պատկերաքարտերի օգտագործումը: Կարևորվեց նաև սովորողների անհատական հնարավորությունների հաշվառումը, նրանց ներգրավման նպատակով տարբերակված մոտեցումների կիրառումը և դասերի ընթացքում դրական, խրախուսող ու համագործակցային միջավայրի ձևավորումը:

Միաժամանակ անդրադարձ կատարվեց այն ուղղություններին, որոնցում անհրաժեշտ է շարունակել աշխատանքը: Մասնավորապես՝ որոշ դասերի դեպքում անհրաժեշտ է առավել հստակ կապ ապահովել սահմանված նպատակների և ակնկալվող վերջնարդյունքների միջև: Խոսքային հաղորդակցում չունեցող կամ հաղորդակցման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողների մասնակցությունը խթանելու նպատակով կարևորվեց այլընտրանքային հաղորդակցման միջոցների առավել հետևողական կիրառումը: Ուշադրություն հրավիրվեց նաև դասի ամփոփման փուլում սովորողների ձեռքբերումների վերլուծության և համապատասխան հետադարձ կապի ապահովման անհրաժեշտությանը:

Ամփոփելով՝ ՄՄ ղեկավարը նշեց, որ դասալսումների արդյունքները նպատակահարմար է օգտագործել ոչ միայն առկա դժվարությունները բացահայտելու, այլև ուսուցիչների մասնագիտական զարգացմանը նպաստելու, հաջողված մոտեցումները տարածելու և դասավանդման գործընթացը շարունակաբար կատարելագործելու համար:

ԼՍԵՑԻՆ 4

ՄՄ ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց նոյեմբեր ամսվա ընթացքում առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության շրջանակում նախատեսվող աշխատանքները: Տեղեկացվեց, որ աշխատանքային պլանի համաձայն՝ «Մաթեմատիկա» առարկայից դասալսումներ են նախատեսվում 8-րդ և 9-րդ դասարաններում:

N	Ուսուցչի անուն, ազգանուն	Ամսաթիվ	Առարկա	Դասարան	Դասաժամ
1	Անահիտ Անդրեասյան	09.11.2026	Մաթեմատիկա	9-րդ	5-րդ
2	Կարեն Գիժլարյան	10.11.2026	Մաթեմատիկա	8-րդԳ	2-րդ

Անդրադառնալով դասալսումների բովանդակային ուղղություններին՝ ՄՄ ղեկավարը նշեց, որ դիտարկվելու են դասի նպատակների իրագործումը, ընտրված ուսուցման մեթոդների նպատակահարմարությունը, սովորողների մասնակցությունն ու ներգրավվածությունը և ուսումնառության արձանագրված արդյունքները: Նշվեց նաև, որ դասալսումների արդյունքները կամփոփվեն և կքննարկվեն համապատասխան ուսուցիչների հետ՝ անհրաժեշտության դեպքում հետագա աշխատանքի համար մեթոդական առաջարկություններ և աջակցություն տրամադրելու նպատակով:

ԼՍԵՑԻՆ 5

ՄՄ ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց «Որոշի խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատի դրանք» վերջնարդյունքի գնահատման նպատակով նախատեսված աշխատանքների կազմակերպման ընթացքը: Տեղեկացվեց, որ 5–9-րդ դասարանների սովորողների տվյալ կարողության դրսևորման մակարդակն ու առաջընթացը գնահատելու համար մշակվել է միասնական էլեկտրոնային հարցաթերթ:

Քննարկվեց հարցաթերթի կիրառման կարգը՝ ընդգծելով, որ գնահատումը պետք է հիմնված լինի ուսուցիչների՝ տարբեր օրերի, ուսումնական իրավիճակների և առաջադրանքների ընթացքում կատարած դիտարկումների վրա: Այս մոտեցումը հնարավորություն կտա յուրաքանչյուր սովորողի կարողությունը գնահատել փաստացի դրսևորումների հիման վրա՝ չսահմանափակվելով մեկ առանձին առաջադրանքի կամ իրավիճակի արդյունքով:

ՄՄ ղեկավարը հատուկ անդրադարձավ սովորողների հաղորդակցման և շարժողական առանձնահատկությունների հաշվառմանը: Ընդգծվեց, որ գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել կարողության արտահայտման տարբեր ձևերը՝ որպես դրսևորում դիտարկելով ոչ միայն խոսքային պատասխանը, այլև հայացքի, ժեստի, առարկայի կամ պատկերի ընտրության և այլընտրանքային հաղորդակցման միջոցներով տրված արձագանքները:

Նշվեց, որ հարցաթերթերի լրացումից հետո ստացված տվյալները կամփոփվեն ՄՄ ղեկավարի կողմից և կենթարկվեն նախնական վերլուծության՝ ըստ դասարանների և առարկաների: Արդյունքները կօգտագործվեն սովորողների ձեռքբերումներն ու առաջընթացն արձանագրելու և հետագա մեթոդական աշխատանքների ուղղությունները հստակեցնելու նպատակով:

ԼՍԵՑԻՆ 6

Մեթոդական միավորման ղեկավար Ա. Սահակյանը ներկայացրեց նոյեմբեր ամսվա ընթացքում նախատեսվող միջոցառումների նախապատրաստման և կազմակերպման հիմնական ուղղությունները:
Անդրադարձ կատարվեց Իրավունքների իրազեկման օրվան նվիրված պաստառների պատրաստմանը: Կարևորվեց աշխատանքներում սովորողների մասնակցության ապահովումը՝ նրանց անհատական

կարողություններին, կրթական կարիքներին և ինքնարտահայտման հնարավորություններին համապատասխան: Նշվեց, որ պաստառների պատրաստման գործընթացը պետք է նպաստի նաև սովորողների՝ սեփական իրավունքների վերաբերյալ պատկերացումների ձևավորմանն ու ամրապնդմանը:

Քննարկվեց նաև գլոբալ ընթերցանության զարգացմանն ուղղված «Իմ ստեղծած աշխատանքների ցուցադրություն» խորագրով աշխատանքների կազմակերպումը: Նշվեց, որ նախաձեռնության միջոցով նախատեսվում է խթանել սովորողների հետաքրքրությունն ընթերցանության և գրքի նկատմամբ, միաժամանակ հնարավորություն տալով նրանց ներկայացնել սեփական ստեղծագործական աշխատանքները: Կարևորվեց յուրաքանչյուր սովորողի մասնակցությունը՝ իր անհատական հնարավորություններին համապատասխան:

Առաջարկվեց ցուցադրության շրջանակում ներկայացնել սովորողների անհատական և խմբային աշխատանքները՝ կիրառելով տարբեր նյութեր, տեխնիկաներ և ստեղծագործական արտահայտման ձևեր:

Լսելով 2026 թվականի հոկտեմբերի 26-ի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մեթոդական միավորումը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել մեթոդական միավորման՝ 6 հարցից բաղկացած օրակարգը և նիստի աշխատանքներն իրականացնել հաստատված օրակարգին համապատասխան: Ապահովել օրակարգային հարցերի քննարկումն ու ընդունված որոշումների կատարումը սահմանված ժամկետներում: Որոշումների կատարման վերահսկողությունը վերապահել ՄՄ ղեկավարին:
2. Նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն՝ արձանագրելով, որ՝
   2.1. նախորդ նիստի արձանագրությունը կազմվել և էլեկտրոնային եղանակով ներկայացվել է սահմանված ժամկետում, իսկ թեմատիկ պլանների մուտքագրումը ԴԿՏՀ համակարգում ավարտվել է սահմանված ժամկետում,
   2.2. նախագծային աշխատանքներն իրականացվում են հաստատված պլաններով և սահմանված ժամանակացույցին համապատասխան,
   2.3. ԱՈՒՊ-ներով նախատեսված աշխատանքներն իրականացվում են շարունակական հիմունքներով, անհրաժեշտության դեպքում կատարվում են համապատասխան լրացումներ և փոփոխություններ, իսկ սովորողների առաջընթացը պարբերաբար արձանագրվում է,
   2.4. էլեկտրոնային մատյանների լրացման մշտադիտարկումը շարունակվում է, իսկ արձանագրված թերություններն ու բացթողումները շտկվում են ընթացիկ աշխատանքների շրջանակում,
   2.5. «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության շրջանակում նախատեսված դասալսումներն իրականացվել են 6-րդ Բ և 6-րդ Գ դասարաններում,
   2.6. նախորդ նիստի որոշմամբ նախատեսված «Ուսումնական առարկաների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարելավում» թեմայով զեկուցումն իրականացվել է:
   2.7. ՄՄ անդամներին հանձնարարել պատշաճ մասնակցություն ապահովել դասընթացի արդյունավետության գնահատման գործընթացին՝ լրացնելով տնօրինության կողմից տրամադրվող էլեկտրոնային հարցաշարը
3. Ընդունել ի գիտություն «Մաթեմատիկա» առարկայից Անուշ Խաչատրյանի՝ 6-րդ Բ և Անահիտ Անդրեասյանի՝ 6-րդ Գ դասարաններում իրականացված դասալսումների արդյունքների վերլուծությունը՝ արձանագրելով դրական փորձը և բարելավման ենթակա ուղղությունները.
   3.1. Անուշ Խաչատրյանին և Անահիտ Անդրեասյանին հանձնարարել դասերի պլանավորման և կազմակերպման ընթացքում առավել հստակ ապահովել ուսումնական նպատակների, ակնկալվող վերջնարդյունքների և սովորողների անհատական կրթական կարիքների փոխկապակցվածությունը:
   3.2. Շարունակել սովորողների անհատական հնարավորություններին համապատասխան տարբերակված, տեսողական, գործնական և խաղային մեթոդների կիրառումը՝ ապահովելով նրանց ակտիվ ներգրավվածությունը դասապրոցեսում:

3.3. Հաղորդակցման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողների մասնակցությունն ապահովելու նպատակով առավել հետևողական կիրառել նրանց հաղորդակցման առանձնահատկություններին համապատասխան միջոցներ:
3.4. Առավել հետևողական իրականացնել սովորողների առաջընթացի գնահատումն ու արդյունքների արձանագրումը՝ դասի ամփոփման փուլում ապահովելով նպատակային հետադարձ կապ:
3.5. ՄՄ ղեկավար Ա. Սահակյանին հանձնարարել հետագա դասալսումների ընթացքում դիտարկել ներկայացված առաջարկությունների կիրառման ընթացքը և անհրաժեշտության դեպքում ապահովել համապատասխան մեթոդական աջակցություն:

4. Հավանության արժանացնել մեթոդական միավորման ղեկավարի ներկայացրած՝ առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության գործընթացի վերաբերյալ առաջարկությունները և դասալսումների ժամանակացույցը:
5. «Որոշի խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատի դրանք» վերջնարդյունքի գնահատման նպատակով՝
5.1. ՄՄ անդամ ուսուցիչներին հանձնարարել երկօրյա ժամկետում լրացնել էլեկտրոնային հարցաթերթը՝ յուրաքանչյուր սովորողի կարողության դրսևորման փաստացի մակարդակը գնահատելով տարբեր օրերի և առաջադրանքների ընթացքում իրականացված դիտարկումների հիման վրա և հաշվի առնելով նրա հաղորդակցման ու շարժողական առանձնահատկությունները:
5.2. Հարցաթերթերի լրացումից հետո ՄՄ ղեկավարին հանձնարարել ամփոփել ստացված տվյալները և իրականացնել նախնական վերլուծություն՝ ըստ դասարանների և ուսումնական առարկաների՝ առանձնացնելով սովորողների ձեռքբերումները, առաջընթացը և լրացուցիչ ուշադրություն պահանջող ուղղությունները:
5.3. Նախնական վերլուծության արդյունքները ներկայացնել տնօրենի հետ ընդլայնված խորհրդակցության ընթացքում՝ տվյալների համադրման և հետագա աշխատանքների ուղղությունների հստակեցման նպատակով:
5.4. Խորհրդակցության արդյունքների հիման վրա վերջնականացնել վերլուծությունը, ներկայացնել ՄՄ առաջիկա նիստում և ձևավորված առաջարկությունների հետ միասին ներկայացնել մանկավարժական խորհրդի քննարկմանը:

6. Նոյեմբեր ամսվա ընթացքում կազմակերպել Իրավունքների իրազեկման օրվան նվիրված պաստառների պատրաստման աշխատանքներ՝ յուրաքանչյուր դասարանում ապահովելով սովորողների մասնակցությունը նրանց անհատական կարողություններին և կրթական առանձնահատկություններին համապատասխան: Աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունը վերապահել ՄՄ անդամ՝ տվյալ դասարանի դասղեկին:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ **Ա. Սահակյան**

Քարտուղար՝ **Ա. Խուբլարյան**

27.10.2026